Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1345[1]-27.04.2026-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածը, 30.1-ին, 30.2-րդ, 30.3-րդ և 30.4-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «՝ սույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն,» բառերը:

Հոդված 5. Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի «15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով և ժամկետներում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականին լիազոր մարմինը օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրամադրում է փախստականի նույնականացման քարտ, իսկ փախստականի նույնականացման քարտ ունեցող անձին՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված էլեկտրոնային միասնական հարթակի գործարկման մասին իր պաշտոնական կայքում Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բայց ոչ ուշ, քան 2026 թվականի նոյեմբերի 1-ը: